Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«12» 03 2021թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Ավանդական Բժշկության Համալսարանում (այսուհետ՝ ԱԲՀ) ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացի վերաբերյալ ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվող հարցումների (այսուհետ՝ Հարցումներ) հարցաշարերի մշակման պահանջները, հարցման անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման կարգը:

1.2. Հարցումներն անցկացվում են «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ԱԲՀ-ի Որակի ապահովման քաղաքականության, Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի հիման վրա, ԱԲՀ-ի ռազմավարական զարգացման ծրագրի պահանջներին համապատասխան:

1.3. Հարցումներն ուսանողների՝ ըստ կրթական վերջնարդյունքների գնահատման գործընթացի բարելավման կարևոր գործառույթ է:

1.4. Հարցումների անցկացման նպատակներն են՝

- տեղեկատվության հավաքագրման, մշակման և վերլուծության միջոցով բացահայտել գործող գնահատման համակարգի առավելություններն ու թերությունները,
- բարելավել ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման գործընթացը:

2. Հարցաթերթիկի մշակումը

Հարցաթերթիկի մշակմանը ներկայացվող հիմնական պահանջներն են՝

1) հարցման նպատակի սահմանում
2) հարցման բովանդակության համապատասխանություն Համալսարանի գործունեության նպատակներին և խնդիրներին
3) մասնակցության գաղտնիություն
4) [illegible]

5) հարցերի խմբավորումը ըստ բաժինների
6) հարցման գործընթացի համակարգվածություն և պարբերականություն
7) պատճառահետևանքային կապեր հաստատող փակ և բաց հարցերի ներառում
8) հարցման չափանիշների կիրառում

Հարցերի պատասխանները պետք է մշակել գնահատման աճման կարգով՝ հարցաթերթիկների արդյունքների վերլուծության արդյունավետությունն ապահովելու նպատակով: Գործընթացը պահանջում է առաջադրված հարցերը հնարավորինս հստակ և հասկանալի ներկայացնել, խուսափել բազմաթիվ պատասխանների ներառումից:

3. Հարցման անցկացումը

3.1. Հարցումներն իրականացվում են ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում՝ Ուսումնական մասի կողմից՝ ըստ ժամանակացույցի[1]:

3.2. Հարցումներն անցկացվում են սույն կանոնակարգին կից ներկայացվող ուսանողների և դասախոսների համար նախատեսված առանձին հարցաթերթերով (տե՛ս հավելված 1, հավելված 2):

3.3. Յուրաքանչյուր հարցման անցկացման սկզբից երկու շաբաթ առաջ Ուսումնական մասը տեղեկացնում է ամբիոնների վարիչներին, ուսխորհրդին հարցման անցկացման վերաբերյալ և տրամադրում է հարցաշարը՝ ծանոթանալու համար: Մեկ շաբաթվա ընթացքում նրանք կարող են դիմել Ուսումնական մաս՝ հարցման վերաբերյալ իրենց առաջարկների, հարցերի շտկման կամ լրացուցիչ հարցերի ավելացման համար: Ուսումնական մասը, հնարավորինս, հաշվի է առնում բոլոր առաջարկությունները:

3.4. Հարցումներն անցկացվում են ինչպես թղթային տարբերակով, այնպես էլ առցանց՝ պահպանելով վերջնաժամկետները և ապահովելով հարցվողների մասնակցության 2/3-ը:

3.5. Հարցումներին մասնակցողները հարցաթերթիկը լրացնում են ինքնուրույն՝ պահպանելով գաղտնիությունը: Պատասխանները տրվում են ըստ հարցաթերթիկը լրացնելու ուղեցույցի:

3.6. Հարցումներն ուղղորդվում են հարցման նպատակները պարզաբանելով:

4. Հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

4.1. Հարցման արդյունքները մշակվում, վերլուծվում են Որակի ապահովման մասնագետների, հարցման գործընթացին ներգրավված ստորաբաժանումների և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների մասնակցությամբ:

---

[1] *Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի և Ուսումնական մասի վարիչի կողմից կազմվում է Համալսարանում հարցումների անցկացման ժամանակացույց:*

4.2. Հարցաթերթերն ունեն առաջարկությունների բաժին, որոնց արդյունքները մշակվում և ներկայացվում են գնահատման բարելավմանը միտված ընդհանրացված առաջարկությունների տեսքով:

4.3. Հարցման արդյունքների մշակումն ու վերլուծությունը կատարվում է մեկամսյա ժամկետում:

4.4. Գնահատված հարցաթերթերը և վերլուծությունները պահվում են 5 տարի՝ Ուսումնական մասում:

5. Հարցման արդյունքների օգտագործումը

5.1.Հարցումներն օգտագործվում են ուսանողի գնահատման գործընթացի բարելավման, հետադարձ կապի ապահովման, նոր նախագծերի մշակման նպատակով:

5.2. Հարցման արդյունքները և վերլուծությունները Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը քննարկում է ՄԿԾ-ների ղեկավարի, ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, Ուսանողական խորհրդի հետ և առաջարկությունների հիման վրա մշակում ուսանողների կրթական վերջնարդյունքների գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:

5.3. Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը առաջարկությունների հիման վրա մշակում է բարելավման գործողությունների ծրագիր, որտեղ նշվում են դրանց իրականացման ժամկետները և պատասխանատուները և ներկայացնում ԱԲՀ-ի ԳԽ-ի հաստատմանը:

5.4. Հարցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է ԱԲՀ-ի պաշտոնական կայքում:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. ԱԲՀ-ի հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԱԲՀ-ի գիտական խորհուրդը:

6.2. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

Հավելված 1
«____» _____20 թ.

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ
ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարգելի՛ ուսանող, Ուսումնական մասն իրականացնում է հարցումներ՝ գիտելիքի գնահատման գործընթացը բարելավելու նպատակով: Հարցումն անանուն է և Ձեր պատասխաններն ու կարծիքները կօգնեն մեզ՝ գնահատելու գիտելիքի գնահատման գործող համակարգի օբյեկտիվությունն ու արդյունավետությունը:

Խնդրում ենք մասնակցել հարցմանը և նշել պատասխաններից միայն մեկը V նշանով:

1. Նշեք Ձեր ֆակուլտետը _____ Կուրսը ____ Խումբը _____
2. Նշեք Ձեր սեռը

Արական ☐ Իգական ☐

1. Գնահատման չափանիշները

1.1. Դուք իրազեկվա՞ծ եք ԱԲՀ-ում գործող «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» կարգի մասին.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ

1.2. Դասընթացի գնահատման չափանիշները (պահանջները) Ձեզ նախապես հայտնո՞ւմ են դասընթացի մեկնարկին.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ այո
○ Դժվարանում եմ պատասխանել

1.3. Պահպանվում են արդյո՞ք ԱԲՀ-ում գործող «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» կարգով սահմանված գնահատման չափանիշները.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ այո
○ Դժվարանում եմ պատասխանել

1.4. Կատարվե՞լ է արդյոք գնահատման չափանիշների փոփոխություն ուսանողների առաջարկով:

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ
○ Դժվարանում եմ պատասխանել

2. Գնահատման մեթոդները/ձևերը և դրանց արդյունավետությունը

2.1. Կիրառվող գնահատման մեթոդները /ձևերը (բանավոր հարցումներ, սեմինարներ, ինքնուրույն աշխատանք, քննություններ, ...) հնարավորություն տալի՞ս են չափելու դասընթացի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը ուսանողի կողմից.

- ○ Այո
- ○ Ոչ
- ○ Մասամբ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

2.2. Միջանկյալ ստուգումները հնարավորություն ընձեռու՞մ են ուսանողներին լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները.

- ○ Այո
- ○ Ոչ
- ○ Մասամբ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

2.3. Ամփոփիչ քննությունները հնարավորություն ընձեռու՞մ են ուսանողներին լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները.

- ○ Այո
- ○ Ոչ
- ○ Մասամբ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

2.4. Թեստային աշխատանքներն ուսանողներին հնարավորություն ընձեռու՞մ են լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները

- ○ Այո
- ○ Ոչ
- ○ Մասամբ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

2.5. Ընթացիկ ստուգումները /կիսամյակի ընթացքում ցուցաբերած ակտիվության գնահատումը /ուսանողներին հնարավորություն ընձեռու՞մ են լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները

- ○ Այո
- ○ Ոչ
- ○ Մասամբ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

2.6. Գնահատեք 1-5 թվանշաններով, որտեղ 1-ը շատ վատ է, 2-ը վատ, 3-ը՝ բավարար, 4-ը՝ լավ, 5-ը՝ շատ լավ.

	Հարցադրումներ	*1*	*2*	*3*	*4*	*5*
1.	Որքանո՞վ է ուսանողների գնահատման բազմազործոն համակարգը նպաստում տեսական գիտելիքների բացահայտմանը					

2.	Որքանո՞վ է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում գործնական հմտությունների և կարողությունների դրսևորմանը					
3.	Հաճախումներին տրվող միավորը՝ 16					
4.	Ուսանողի ընթացիկ ստուգմանը (ակտիվություն) տրվող միավորը՝ 20					
5.	Ուսանողի ինքնուրույն անհատական աշխատանքին տրվող միավորը՝ 14					
6.	Միջանկյալ ստուգումներին տրվող միավորը՝ 25+25					
7.	Ամփոփիչ քննությանը տրվող միավորը՝ 50					

3. *Ուսանողների գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը*

3.1. Ուսանողին հայտնի՞ է, թե քննական գործընթացի ժամանակ ինչպես է ձևավորվում նրա միավորը.

○ Այո
○ Ոչ
○ Դժվարանում եմ պատասխանել

3.2. Դասախոսներն արձագանքո՞ւմ են ուսանողների բողոքարկումներին.

○ Այո
○ Ոչ
○ Չեմ առնչվել

3.3. Ուսանողի բողոքարկման արդյունքում կատարվե՞լ է ուսանողի միավորի փոփոխություն.

○ Այո
○ Ոչ
○ Չեմ առնչվել

3.4. Քննաշրջանի և լուծարքի ժամանակ գնահատման մոտեցումը տարբերակված է: Դուք գոհ եք այդ մոտեցումից:

○ Այո
○ Ոչ

3.5. Օբյեկտի՞վ է արդյոք գիտելիքի հեռավար գնահատման գործընթացը.

○ Այո
○ Ոչ
○ Դժվարանում եմ պատասխանել

4. *Գնահատման հետադարձ կապ*

4.1. Գնահատման արդյունքների վերաբերյալ դասախոսից ստանում եմ հիմնավորում և/կամ խորհուրդ

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ
○ Դժվարանում եմ պատասխանել

4.2. Գնահատման արդյունքներն օգտագործվում են դասավանդման և ուսումնառության գործընթացները բարելավելու համար

○ Այո

○ Ոչ

○ Մասամբ

○ Դժվարանում եմ պատասխանել

5. Նշեք գնահատման գործընթացի ամենադրական կողմերը

_____

_____

_____

6. Նշեք գնահատման գործընթացի ամենաբացասական կողմերը

_____

_____

_____

7.Առաջարկություններ _____

_____

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար

Հավելված 2

«____» _____20 թ.

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարգելի՛ դասախոս, գնահատման գործընթացը բարելավելու նպատակով Ուսումնական մասն իրականացնում է հարցումներ: Խնդրում ենք մասնակցել հարցմանը, քանի որ Ձեր պատասխաններն ու կարծիքները կօգնեն մեզ՝ գնահատելու գիտելիքի գնահատման գործող համակարգի օբյեկտիվությունն ու արդյունավետությունը:

Նշել պատասխաններից միայն մեկը V նշանով:

Նշեք Ձեր ամբիոնը_____

1. Գնահատման չափանիշները.

1.1. Դասընթացի գնահատման չափանիշները (պահանջները) հայտնո՞ւմ եք ուսանողին դասընթացի մեկնարկին.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ
○ Դժվարանում եմ պատասխանել

1.2. Կատարվե՞լ է արդյոք գնահատման չափանիշների փոփոխություն ուսանողների առաջարկով:

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ
○ Դժվարանում եմ պատասխանել

2. Գնահատման մեթոդները/ձևերը և դրանց արդյունավետությունը

2.1. Կիրառվող գնահատման մեթոդները հնարավորություն տալի՞ս են չափելու դասընթացի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը ուսանողի կողմից.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ
○ Դժվարանում եմ պատասխանել

2.2. Միջանկյալ ստուգումները հնարավորություն ընձեռու՞մ են ուսանողներին լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ
○ Դժվարանում եմ պատասխանել

2.3. Ամփոփիչ քննությունները հնարավորություն ընձեռու՞մ են ուսանողներին լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ
○ Դժվարանում եմ պատասխանել

2.4. Թեստային աշխատանքներն ուսանողներին հնարավորություն ընձեռու՞մ են լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները

- ○ Այո
- ○ Ոչ
- ○ Մասամբ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

2.5. Ընթացիկ ստուգումները /կիսամյակի ընթացքում ցուցաբերած ակտիվության գնահատումը /ուսանողներին հնարավորություն ընձեռու՞մ են լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները

- ○ Այո
- ○ Ոչ
- ○ Մասամբ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

2.6.Մատչելի՞ է արդյոք գործող տեղեկագրերով աշխատելը.

- ○ Այո
- ○ Ոչ
- ○ Մասամբ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

2.7. Գնահատեք 1-5 թվանշաններով, որտեղ 1-ը շատ վատ է, 2-ը վատ, 3-ը՝ բավարար, 4-ը՝ լավ, 5-ը՝ շատ լավ.

	Հարցադրումներ	*1*	*2*	*3*	*4*	*5*
1.	Որքանո՞վ է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում տեսական գիտելիքների բացահայտմանը					
2.	Որքանո՞վ է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում գործնական հմտությունների բացահայտմանը					
3.	Որքանո՞վ է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում կարողությունների դրսևորմանը					
4.	Հաճախումներին տրվող միավորը՝ 16					
5.	Ուսանողի ընթացիկ ստուգմանը (ակտիվություն) տրվող միավորը՝					
6.	Ուսանողի ինքնուրույն անհատական աշխատանքին տրվող միավորը՝ 14					
7.	Միջանկյալ ստուգումներին տրվող միավորը՝					
8.	Ամփոփիչ քննությանը տրվող միավորը՝					

3. Ուսանողների գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը

3.1. Ուսանողին հայտնի՞ է, թե քննական գործընթացի ժամանակ ինչպես է ձևավորվում նրա միավորը.

- ○ Այո
- ○ Ոչ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

3.2. Դասախոսներն արձագանքո՞ւմ են ուսանողների բողոքարկումներին.

○ Այո

○ Ոչ

○ Չեմ առնչվել

3.3. Ուսանողի բողոքարկման արդյունքում կատարվե՞լ է ուսանողի միավորի փոփոխություն.

○ Այո

○ Ոչ

○ Չեմ առնչվել

3.4. Քննաշրջանի և լուծարքի ժամանակ գնահատման մոտեցումը տարբերակված է: Դուք գոհ եք այդ մոտեցումից:

○ Այո

○ Ոչ

3.5. Օբյեկտի՞վ է արդյոք գիտելիքի հեռավար գնահատման գործընթացը.

○ Այո

○ Ոչ

○ Դժվարանում եմ պատասխանել

4. *Գնահատման հետադարձ կապ*

4.1. Գնահատման արդյունքների վերաբերյալ դասախոսից ստանում եմ հիմնավորում և/կամ խորհուրդ

○ Այո

○ Ոչ

○ Մասամբ

○ Դժվարանում եմ պատասխանել

4.2. Գնահատման արդյունքներն օգտագործվում են դասավանդման և ուսումնառության գործընթացները բարելավելու համար

○ Այո

○ Ոչ

○ Մասամբ

○ Դժվարանում եմ պատասխանել

5. Նշեք գնահատման գործընթացի ամենադրական կողմերը

_____

_____

_____

6. Նշեք գնահատման գործընթացի ամենաբացասական կողմերը

_____

_____

_____

7. Առաջարկություններ _____

_____

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար